

638.1

9-55

№ 3

3498

ՄԵԶՈԻՆԵՐ

Կազմեցին

Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ և Տ. ՈՍԾՄՈՃԵԱՆ



ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՑԵԱՆՏԻ

Типографія К. С. Саноянца, въ Александропо

1898

638.1
9-55

№ 3

1874

ւր

ՄԵՂՈՒՆԵՐ

530
90-21

Կաշեցի

Ա. ՉԻԽՆԿԱՐԵԱՆ և Տ. ՈՍՁՄԱԺԵԱՆ



ԱՂԷՔՍԱՆԻՐԱՊՈՒ

ՏՊԱՐԱՆ ԳԵՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԱՆՑԻ

Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ.

Биб. ул. соб. домъ.

1897

2011

12002

Дозволено цензурою. Тифлисъ, 17 мая 1897 г.

Կենդանիների, նրանց բնազդի և հասկացողութեան մասին խօսելուց յետոյ՝ թոյլ տուր, սիրելի ընթերցող, այս անգամ քո ուշադրութիւնը դարձնենք մի ուրիշ շատ փոքրիկ կենդանու վրայ։ Սա թէև սլստիկ է, բայց չստիկ է. նա մեզ իր փոքր տեղով շատ բան է սովորեցնում։ Ո՛ւմ լայտնի չէ նրա տուած անուշ մեղրը, դեղին ու սպիտակ մոմը։ Մեզանից որ մէկը այս կամ այն ուխտատեղը կամ եկեղեցին նրա տուած կերօններով զարդարուած չէ տեսել. ահա այդ պատիկ ճանճի մասին ենք խօսելու, որը մեզանից ո՛չ մեծ ծախս, ո՛չ էլ շատ աշխատանք է պահանջում, այլ օգուտ է տալիս և խրատական օրինակ լինում։ Մենք զարմանալի մարդիկ ենք, մեզ օգտակար մի այսպիսի միջատի կեանքով համարեա՞ բոլորովին չենք հետաքրքրւում և մինչև անգամ մի առանձին բանի տեղ էլ չենք դնում։

Մեզանից շատերի մտքով չի անցնում, թէ քնչալէս են շինում այդ տրդտղան, անշնորհք

ճանճերը մեզ համար սիրելի, քաղցր մեղրը, թանկագին մոմը:

Ի՞նչպէս են նրանք ապրում, բազմանում, կառավարւում և այլն: Երբ մի փոքր մեզ ու մեզ այս ու սրա նման հարցերի մասին մտածենք, կրտեսնենք, որ ճշմարիտ մենք դեռ շատ բաներ չգիտենք և շատ բանով չենք հետաքրքրւում. ինչպէս ասում են, մեզ դեռ շատ հաց ու պանիր կայ ուտելու ամեն բանի մասին մտածել, սովորել և նրանից օգտուել: Մենք կրփորձենք այս անգամ այդ օգտակար և սիրելի մեղուի հետ քեզ ծանոթացնել. բայց դու համբերութիւն ունեցիր, ամենից առաջ իմանանք նրա մարմնի կազմութեան միայն մի քանի մասերը և ապա շարունակենք:



2. ՄԵՂՈՒԻ ԿԱԶՄՈՒՆԵԹՐ.

Մեղուի և առհասարակ բոլոր միջատների մարմինը բաժանւում է 3 մասի. 1) գլուխ, 2) կուրծք և 3) փոր: Գլխի վրայ կան երկու փայլուն աչքեր, որոնք անշարժ են: Երկու ծնօտներից վարինը աւելի երկար, գդալի նման փոս և ծայրը սուր է: Ծնօտի վրայ են բեխերի նման երկու բարակ թելի պէս մարմիններ, որոնք շփոնք են ասւում. դրանցով է մեղուն զգում, շօշափում, ընկերներին այս կամ այն բանը հասկացնում:

Լեզուն երկար ու շատ բարակ է: Նա ծածկուած է կոշտ մազերով և ծծելու համար յարմար: Կրծքի երկու կողմում կան մի մի զոյգ փայլուն թևեր, և երեք երեք ոտքեր: Թևերը թռչելու, ոտքերը մանդալու համար են: Ոտքերի վրայ շատ պարզ տեսնւում են զանազան երկարութեան բարակ մազեր, այնպէս որ նրանց ոտքերը սղոցի ատամների նման են, մանաւանդ յետին ոտքերի վարին մասում կայ մի մի փոսիկ, որտեղ նա ծաղիկներից հաւաքած փոշին պահելով տուն է բերում: Մեղուները առհասարակ արագ, լաւ

Թուշող են. իւրաքանչիւր մեղու ունի 6 ոտք և 4 թև: Փորը մարմնի ամենից երկար մասն է, նա կազմուած է մի քանի կլոր օղակաձև մասերից, որոնց ծայրերը մէկ մէկու մէջ են մտած: Փորի ամենավարի օղակի մէջ կայ թոյնի մի շատ փոքրիկ պարկ, իսկ սրա մօտն էլ ասեղանման բարակ, ծակող խայթոց. այնպէս որ թշնամիների դէմ կըռուելիս իրան պաշտպանելու համար այս խայթոցը զէնք է լինում: Նա դորանով թշնամուն վիրաւորում, մէջն էլ թոյն է լցնում:

Թէև մի քանիսի, ինչպէս Թագուհի մեղուի չգործածելուց՝ թոյնի պարկը, խայթոցը, սրանց ձևն էլ, պաշտօնն էլ փոխուել են, արու մեղուն դեռ դրանցից ոչ մէկն էլ չունի, բայց սրանց մասին չեմոյ:

Եթէ մեղուի մարմինը գլխից մինչև փորի վարին օղակը երկարութեամբ վերից վար կտրենք, այն ժամանակ կըտեսնենք, որ բերանից բարակ, նեղ խողովակի ձևով սկսում է կերակրի ճանապարհը կամ ֆերոքսիոլը՝ դրանից յետոյ տեսնում ենք մի պարկաձև խողովակ. որովհետև մեղունները ծաղիկների քաղցրահամ հեղուկ նիւթը ծծում, այստեղ են հաւաքում, դրա համար դա ասում է Ֆլշի սիստէմ. սրան կպած կայ մի ուրիշ մեծ ու երկար պարկաձև խողովակ, որը մեղուի ֆերոքսիոլի

հետ է, քանի որ կերած կերակուրը այդտեղ գալիս մարսւում է և մարմնին սնունդ տալիս: Ուրեմն մեղուն երկու հատ էլ ստամոքս ունի, մեղրի և կերակրի. այս երկուսը իրար հետ միացած են փոքրիկ դռնակով, այնպէս որ մեղուի կամքից է կախուած, կարող է իսկական կերակրի ստամոքսը փակել կամ բանալ, նոր կերակուր ստանալ: Ստամոքսից յետոյ գալիս է մի բարակ աղիք: Փորի երկու կողմը վերից վար՝ երկար, բաւականին ուռուցիկ խողովակաձև պարկեր կան. սրանք տեղ-տեղ փորի օղակների հետ շատ բարակ խողովակներով կապւում են և դէպի դուրս բացւում, այնպէս որ մեղուն կարող է այդ բարակ անցքերի միջով նոր, թարմ օդ ներս շնչել և ներսինը դուրս տալ. այսպիսով դրանց միջոցով նա շունչ է առնում և սա մարդու ու կենդանիների թոքերի տեղն է բռնում: Փորի մէջն են նրանց առական և իգական գործարանները:

3. ՄԵԼՈՒՆԵՐԻ ՓԵԹԱԿԸ.

Մեղունների տեսակների մասին խօսելուց առաջ՝ եկ, սիրելի ընթերցող, մի անգամ միասին ներս նայենք նրանց բնակարանը կամ փեթակը և տեսնենք, թէ ինչ կայ այնտեղ: Անտառներում

կամ ձորերում ով տեսել է վայրենի դրուժեան մէջ փեթակներ, նա աւելի պարզ հասկացողութիւն կունենայ դրանց մասին, որովհետեւ այնտեղ ամեն ինչ մեղուններն իրանք իրանց գլխուէն անում, նրանց օգնող չկայ: Յանկարծ տեսնումէք քարերի խողովներ, ծառերի փուչակներ և նրանց մէջ շատ անգամ մեղունները ժիր կերպով ներս ու դուրս են անում. դա նրանց բնական-փեթակն է:

Մեծացնելով դրա փոքրիկ անցքը, մենք կը տեսնենք ամբողջ փեթակի մէջ չորս կողմը մաքուր, ապակու նման հարթ մոմով սուաղած պատեր:

Մարդ ինքն իրան զարմանալով հարց է աւրիս. «Արդեօք սա մարդու ձեռքով, զանազան գործիքներով շինած չէ»: Ո՞վ կարող էր մտածել, թէ դա այդ փոքրիկ մեղունների ծնօտների գործն է: Մենք այնտեղ ո՛չ մի անմաքրութիւն, կեղտոտութիւն չենք տեսնիլ. փեթակի մէջ կան շատ հաստիկ մեղրահացեր. սրանք մէկ մէկուց որոշ չափով հեռու՝ կանոնաւոր իրար վրայ են դարսուած և ամեն մէկի մի կամ երկու կողմը մեղրամոմով փեթակի պատերի հետ կպցրած է, այնպէս որ մեղուններն առանց դժուարութեան կարող են վերելից կամ ներքեւից մէկ մեղրահացի

միւսի վրայ անցնել ու իրանց գործը շարունակել. միայն փեթակի ամենավերջին մեղրահացն է, որ չորս կողմից պինդ կերպով պատերի հետ լաւ ամրացրած է:

Վեր առնենք այդ մեղրահացը ձեռքերս և թնչ կըտեսնենք. նա ամբողջապէս դաժալի նման հաստ, սպիտակ, մաքուր մեղրամոմ է. իսկ երբ դանակի ծայրով նրա վրայից կամ տակից մեղրամոմէ շատ բարակ շերտը զգուշ կերպով վեր առնենք, այն ժամանակ մեր առաջ կըբացուին վեց կողմ ունեցող բազմաթիւ փոքրիկ խցիկներ. սրբանք ամենքն էլ լիքն են պտրդ, սպիտակ կամ դեղին մեղրով: Եթէ այդ խցիկները դատարկ լինին կամ մենք դատարկենք, այն ժամանակ կըտեսնենք նրանց բոլոր կողմերի թղթից էլ բարակ կոկիկ պատերը. այո՛, մեղունների այդ վարպետութիւնը մեզ միայն զարմացնել կարող է:

Երբեմն ջահիլ մեղունները այդ խցիկները այնպէս վարժ, հարթ և ուղիղ ձևով չեն կարող շինել. ահա այդ դէպքում աւելի հասակաւոր փորձուածները նրանց օգնում, ուղղում կամ բոլորովին նորից շինում են: Շարունակենք միւս մեղրահացերն էլ նայել, նոյն մաքրութիւնը, նոյն գեղեցիկ շինութիւնը կըտեսնենք. իսկ երբ լաւ

ուշադիր կերպով նայենք, ուրիշ տեսակ խցիկներ էլ կը գտնենք և իսկապէս էլ ամեն տեսակ փեթակի մէջ երեք տեսակ խցիկներ կան. ամենից շատը փոքրիկ վեցանկիւնանի, մի ուրիշ տեսակը նոյն ձևին, բայց առաջիններից մեծ է, իսկ երրորդ տեսակի թիւը թէև քիչ, բայց շատ մեծ, երկարաւուն, խոզի կաղնու նման է:

«Ինչո՞ւ համար են սրանք, ինչո՞ւ տեսակ տեսակ ձևերով են, պիտի հարցնես, ընթերցող:»

Պրանք մեղունների օրօրոցը, բնակարանն ու մեղրի պահարաններն են, որոնց մասին շուտով կը պատմենք: Մարդկանց ձեռքի տակ ապրող մեղուններն էլ ունին զանազան տեսակ, զանազան ձևի փեթակներ. սրանք արդէն մարդիկ են նրանց համար պատրաստում. այստեղ որովհետև մեղունները պատրաստի բնակարան են ստանում, դրա համար էլ երկար ու բարակ աշխատանքի կարիք չունին, իսկոյն խցիկներ են շինում ու գործ սկսում:

Աշխարհիս երեսին շատ տեսակ տեսակ մեղուններ կան. գոնէ մինչև օրս մարդկանց 4500 տեսակ յայտնի է. աւելորդ համարելով մանրամասնութեան յետեւից ընկնելը, մենք այստեղ կը խօսենք միմիայն շատ սովորական, ամեն կողմ տարածուած ու մարդկանց օգտակար մեղունների

մասին: Եթէ ուշադրութիւնով նայենք ամեն մի փեթակի մեղուններին, անպատճառ երեք տեսակներ կը տեսնենք. 1) արուններ 2) էգեր և 3) աշխատաւորներ: Մեղունները ո՛չ մի տեղ, ո՛չ մի ժամանակ բաժան բաժան չեն ապրում և չեն էլ կարող: Նրանք միշտ խմբով են ապրում և ամեն տեղ էլ այդ երեք տեսակներից անպատճառ լինելու են, եթէ ոչ նրանց խումբը, նրանց միութիւնը կը քանդուի և ամենքն էլ կը փչանան. թէ ինչո՞ւ այդպէս է, մենք շուտով կը տեսնենք:

ՄԵՂՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

4, Թ Ա Գ Ո Ի Հ Ի Մ Ե Ղ Ո Ի. *)

Սա իսկապէս մեղունների մայրն է, ամեն փեթակի մէջ մի հատ է լինում և միայն նա է ձուեր ածում:

Այդ ձուերից դուրս են գալիս թագուհի, աշխատաւոր և արու մեղուններ: Որովհետև փեթակի մէջ ուրիշ ձու ածող չկայ բացի թագուհուց,

*) Տես պատկեր 3

այդ պատճառով եթէ սա չլինէր, այն ժամանակ ամբողջ փեթակը պիտի ոչնչանար. դեռ այդ բաւական չէ. երբ թագուհին փեթակի մէջ չի լինում, երբ նա պատահամբ վայր ընկնում-ոչնչանում է կամ թէ թշնամի մեղուները նրան փախցնումեն, մի խօսքով անթագուհի փեթակի մեղուներն էլ հանգիստ որտով իրանց գործով, իրանց աշխատանքով չեն կարող պարապել, այլ նրանք անգործ, տխուր, թույլ կերպով տրդագում, կարծես, իրանց կորուստն են ողբում: Նրանք թողնում են իրանց բնակարանը, հեռանում կամ սրտի ցաւից մեռնում են. այսպէս ահա նրանց տուն ու տեղը քանդւում է: Մեղուապահները մեղուների անգործ ու տխուր դրութիւնից հասկանում են գործի եղելութիւնը. նրանք աշխատում են նոր թագուհի ձարել, որով ամեն ինչ նորից կարգի է գալիս:

Ինչպէս իմացանք, թագուհին միակ էգ, ձուածող մեղուն է և առանց սրան ո՛չ նոր մեղուներ կարող են առաջ գալ, ո՛չ էլ եղածները կարող են ապրել. այսպէս այս էգ մեղուն ամբողջ փեթակի հոգին է կազմում, նրան նորից կեանք տրւող, նոր սերունդ բազմացնողն է, ճիշդ մի գթաւատ այլի մօր նման, առանց որին նրա մատաղահաս որդիները անխնամ կըմնային:

Ահա հէնց այս պատճառով մօր նման հսկող

այդ մեղուին թագուհի են ասում: Թագուհին իր տեսքով, գոյնով և մեծութեամբ միւսներից ջոկնւում է: Նա թագուհու նման հպարտ ու գեղեցիկ է, ամեն ինչ կարգի բերողն է և նրա արածն ու կատարածը սրբութիւն է բոլորի համար: Մեղուները նրան շատ լաւ հասկանում են. նրանք գիտեն, որ առանց թագուհու իրանք չեն կարող ապրել, այդ պատճառով նրա համար աւելի մեծ բնակարան են շինում, շատ լաւ կերակրում, կանոնաւոր խնամք տանում, ծառայում և միշտ նրան շրջապատած՝ տաքացնելով պահում, պահպանում են: Դուք ո՛չ մի անգամ թագուհուն մենակ մնացած չէք տեսնիլ. սա միշտ իր չորս կողմը պահապան օգնականներ ունի: Թագուհին մարմնով միւսներից աւելի երկար է, այնպէս որ հարիւրաւոր մեղուների մէջ իսկոյն նրան կարելի է ճանաչել: Թագուհու կուրծքը, փորի օղակաձև մասերը և ոտքերը աւելի դեղնագոյն են, այնինչ միւսներինը՝ աւելի սև: Թագուհին ծերութեան ժամանակ, այսինքն երբ նա 4 կամ 5 տարեկան է լինում, սև գոյն է ստանում: Թագուհու թւերը իր մարմնի համեմատ կարճ են և թռչելու անյարմար, իսկ երբ նա մեղուներից լաւ բեղմնաւորւում է, այն ժամանակ ծանրանում և չի կարող կանոնաւոր թռ-

չել. Թեւերն այժմ նրան այնչափ օգտակար չեն։ Այս ժամանակ մեղուները ամեն զգուշութիւն գործ են դնում, որ Թագուհին յանկարծ փեթակից վար չընկնի ու կորչի։ Այս դէպքում մեղուապահները օգնում են նրանց, դրանով ինչպէս իրանք, նոյնպէս մեղուներն անվնաս են մնում։

Թագուհին փորի օղակներէ վարի ծայրում ունի մի երկար, ուղիղ խայթոց. նա այդ գործ է ածում իր հակառակորդ Թագուհիների հետ կրճուելիս և ձու ածելիս։ Նրա խայթոցը իսկապէս իրան պաշտպանելու գէնք չէ. դրանով նա առանձին վնաս չի կարող տալ։ Նա իր խայթոցը վերքի մէջ չի թողնում, մարդկանց էլ առհասարակ չի խայթիլ, միայն շատ նեղն ընկած գէպքում է այդ անվնաս գէնքը գործածում։ Նրա խայթոցի գլխաւոր նպատակն է ձու ածելիս ուղիղ հասցնել խցիկի յատակին. իսկ եթէ նա այդ ուղիղ, երկար խայթոցը չունենար, այդպէս չէր կարող առնել։ Թագուհին բացի իր արտաքին տեսքից, ներքինով էլ զանազանում է միւսներից. օրինակ, նա փորի մէջ ունի երկու հատ բաւականին մեծ՝ տանձի ձևով պարկեր, որոնք վարին մասում իրար հետ բարակ, նեղ խողովակով միանում են։ Այդ տանձաձև պարկերը լցուած են միջոնաւոր՝ գնդաւորներից էլ շատ փոքր՝ մանրիկ ձուերով. այս

ձուերով լիքը պարկերն ասում են *չապրան*^{*)}։ Գարնանն ու աշնանը Թագուհին ձուարաններից խցիկների մէջ ձուեր է ածում։ Թագուհու երկու ձուարանների միացած տեղում գտնւում է նոյնպէս մի փոքրիկ կլոր պարկ. դա սերմի տանն է կամ *սերմաբան*. այսինքն երբ Թագուհին արուների հետ միանում է, արական սերմի թելիկները այդ փոքրիկ պարկի մէջ հաւաքում, պահում է, այս պատճառով նա ծանրանում է և չի կարող լաւ թռչել։ Այսպէս Թագուհին իր մէջ ձուերի և արական սերմի հաւաքած մեծ պաշար ունի. երբ ուզենայ, կարող է առանց արական սերմի հասարակ՝ չբեղմնաւորուած ձու ածել և ընդհակառակը, երբ էլ ուզենայ, կարող է արական սերմի հետ միացած՝ բեղմնաւորուած ձու ածել. այնպէս որ, դա կախուած է միայն նրա կամքից։ Երբ ձուն տանձաձև ձուարանից վար է իջնում, այն ժամանակ Թագուհին բաց է անում սերմնարանի բերանը, որտեղից արական սերմի մի երկու շատ բարակ թելիկներ են դուրս գալիս և ձուի ճանապարհի վրայ սպասում. ձուն վերեւից գալով՝ միանում է արական սերմի հետ և բեղմնաւորուած դուրս է գալիս խցիկի մէջ. սրա հակառակ՝ երբ Թա-

^{*)} Տես պատկեր 4

գուհին սերմնարանը չի բաց անում, այն ժամանակ չբեղմնաւորուած ձու է ածուծ:

«Ի՞նչ նշանակութիւն ունի դա, որ մեզ այսչափ երկար ու բարակ նկարագրումէք, պիտի հարցնեն մեզ ընթերցողներից մի քանիսը:» Այո, դա որոշ նշանակութիւն ունի և դրանից է կախուած արական, իգական և աշխատաւոր մեղուների դուրս գալը: Թագուհու ածած չբեղմնաւորուած ձուերից դուրս են գալիս միմիայն արական մեղուներ, իսկ բեղմնաւորուածներից էգեր, այսինքն թագուհիներ և աշխատաւորներ: Թէ որոնք են փեթակի համար աւելի օգտակար, պէտքական, շուտով կըտեսնենք: Թագուհու բնակարանն էլ զանազանում է միւսներից. մեր վերև ասած խողի կաղնու ձև ունեցող ամենամեծ խցիկը սրան է պատկանում: Բնակարանի մեծութիւնը, լաւ սննդատու առատ կերակուրը, նրան մարմնով մեծ, ձու ածելու ընդունակ են դարձնում: Թագուհին կարող է մինչև 5 տարի ապրել:

5. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՂԱՆԵՐ.

Առողջ, լաւ փեթակի մէջ սրանց թիւը լիարժեք հազարից մինչև երկու հարիւր հազար է կանու: Ամեն փեթակի մէջ միշտ մեծամասնութիւնը սըրանք են կազմում: Ամենից շատ աշխատող, ամենից քիչ ուտող, ամենից շատ չարճարուող ու կարճ ապրողն այս խեղճերն են. ասենք մի քանի խօսքով: Երեք տեսակ մեղուներից մարմնով ամենից փոքրը սրանք են. մարմնի գոյնը, փորի օղակները և ոտքերը սևագոյն են: Թագուհու հակառակ՝ սըրանք փորի վարին ծայրում ունին թոյնի մի փոքրիկ, գործունեայ պարկ և կարճ, կեռ խալթոց: Սրանով թշնամուն չարաչար պատժում, վիրաւորում են, մէջը թոյն թափում, փառաւոր ուռեցնում ու տանջանք են պատճառում: Դժբաղդաբար այդ պատիժը իրանց վրայ էլ էժան չի նստում, իրանց պաշտպան խալթոցը վէրքի մէջ մնալով՝ էլ չեն կարող ապրել. այսպէս թշնամուն պատժելով՝ իրանց կեանքն էլ զոհ են տալիս: Մեր տեսած ու պատմած փեթակի մեղրահացերը, բոլոր տեսակ խցիկները, փեթակի մաքրութիւնը, մի խօսքով բոլորը, բոլորը միայն սրանց աշխատանքով է շինուած: Բացի դրանից, սրանք են, որ խումբ խումբ դուրս գալով՝ գնում են դաշտեր, անտառներ և պատկեր 2

ներ, սարեր ու ձորեր և ծաղիկներից քաղցրահամ հեղանիւթ, ծաղկափոշի հաւաքելով՝ ուրախ-ուրախ տուն են վերադառնում: Սրանք են մեղր շինում, մոմ պատրաստում, պակաս, քանդուած տեղերը կարկտում, ձագերին, թագուհուն և արուներին կերակրում, խնամք տանում: Մի խօսքով տան մէջ ձու ածող, սերնդի թիւը բազմացնողը թագուհին է, իսկ տան և դրսի միւս աշխատանքներ կատարողը սրանք են, այդ պատճառով մարդիկ նրանց աշխատաւորներ են ասում:

Առանց աշխատաւորների մեղուները ամեն բանի պակասութիւն քաշելով՝ պէտք է ոչնչանային: Ինչպէս ասացինք, աշխատաւորները թագուհու բեղմնաւորուած ձուերից են դուրս գալիս, ուրեմն նրանք էլ էգեր են:

Իսկապէս թէև նրանք էգեր են, ձուարան ունին, բայց նրան շատ երկար ժամանակ, հազարաւոր տարիներ չգործածելով, նրա ձևը, մեծութիւնը փոխուել, փոքրացել է և իր գործը չի կարող կատարել. ահա այդ թուլացած, անպէտք ձուարանը այսօր աշխատաւոր մեղուի համար լետ գնացած, անօգուտ գործարան է դարձել:

Չկարծես, սիրելի ընթերցող, թէ այդպէս աւելորդ, անպէտք մասեր միայն մեղուներն ունին. ամենեւին ոչ. եթէ ուշադրութիւնով ուրիշ կեն-

դանիների, նոյն իսկ մենք մեզ վրայ նայենք, այդպէս բաներ շատ կրտեսենք. հէնց օրինակ, ինչո՞ւ համար են մեր ոտքի մատները, ի՞նչ օգուտ են տալիս այժմ մեզ. չէ՞ որ նրանք այսօր մեզ համար անպէտք են. կամ թէ ի՞նչու համար են տղամարդկանց ծծերը. մէթէ չգիտենք, որ այսօր նրանք մեզ համար աւելորդ են և կանանց ծծերի հետ համեմատելով՝ շատ փոքր ու տգեղ են: Այսօր չորքոտանի կենդանիներից շատերը, ինչպէս ձին, շուներ, կովը և այլն, իրանց ականջները շատ լաւ կերպով շարժում, ձայնի, աղմուկի կողմը բաց ու խուփ են անում: Մենք էլ թէև ականջներ շարժող մկանուսքներ (մսեր) ունինք, բայց այսօր նրանցով չենք կարող մեր ականջները շարժել, նրանք մեզ անպէտք են, թէև եթէ մարդ շատ վարժութիւններ, փորձեր անէ, կարող է շարժել: Մեր ոտքերի մատները, ծծերը, ականջները մի ժամանակ իրանց գործը շատ կանոնաւոր կատարել են, ճիշդ այնպէս՝ ինչպէս այսօր մեր ձեռքերը, կանանց ծծերը, կենդանիների ականջները և այլն:

Բացի դրանից մենք և կենդանիները ուրիշ շատ լետ գնացած, այսօր մեզ համար անպէտք, անգամ վնասակար մասեր ունինք, որոնց մասին երկարօրէն խօսելը մեզ շատ հեռուն կրտա-

նէր:

Այսպէս յետ գնացած են աշխատաւոր մեղու-
ների ձուարանները, թագուհու մեղրի ստամոքսը,
թոշնի պարկը, արունների վարին ծնօտի և լեզուի
կարճութիւնն, որով նրանք ծաղիկների հիւթը
չեն կարող ծծել ու աշխատել: Զուարաններն ի-
րանց տեսքով փոխուած և համարեա բոլորովին
նման չեն թագուհու ձուարանին: Չնայելով այս
ամենին, երբեմն պատահում են աշխատաւորներ,
որոնց ձուարանում ձուեր էլ են լինում. այդ ձուե-
րը առհասարակ շատ քիչ, անկանոն, մէկը մեծ,
միւսը փոքր է: Ահա այդ տեսակ աշխատաւոր-
ները ձուեր են ածում, բայց արունների հետ չեն
կարող միանալ, որովհետեւ սերմի պարկը չգործած-
ուելով յետ է գնացել, անպէտք դարձել, այդ պատ-
ճառով նրանց ձուերից միմիայն արուններ են դուրս
գալիս: Այդ տեսակ էգերը չեն կարող ձուերը խցիկ-
ների յատակին ածել, այլ նրանց պատերի վրայ
են կպցնում. սրա պատճառն էլ հասկանալի է, քա-
նի որ նրանց խայթոցները կարճ և կեռ են,
նրանք չեն կարող ձուն ուղղակի յատակին հասցնել:
Ամեն բան անող, շատ դատող, քիչ ուտող աշխա-
տաւորների բնակարաններն էլ ամենից փոքր վեց-
անկիւնանի խցիկներն են:

Այսպէս նրանք ամեն բանից զրկուած, կարծես,

ընդհանուր խմբին ոյժ, կենդանութիւն տալու և
յաջորդ սերունդ թողնելու համար են. ահա նրանց
դառն աշխատանքի քաղցր պտուղն ու մխիթա-
րութիւնը: Աշխատաւորները ապրումեն 5-ից մին-
չև 8-ը կամ 10-ն ամիս:

ՈՐՈՒ ՄԵՂՈՒՆԵՐ. *)

Սրանց թիւը շատ չէ. իւրաքանչիւր փեթակի
մէջ հազիւ 100-ից մինչև 800 կամ 1000 լի-
նին. մարմնով աշխատաւորներից աւելի մեծ, հաստ
ու անշնորհք են: Փեթակի մէջ ամենախեղճ և ա-
մենաթշուառը սրանք են. պաշտպանելու համար
զէնք, խայթոց չունին. իրանք իրանց աշխատան-
քով չեն կարող կերակուր ձարել. աշխատանքի
մասին հասկացողութիւն չունին. ձուերից դուրս
գալու օրից սկսած մինչև մահերը՝ աշխատաւոր-
ների բերած պատրաստի կերակուրներն են ա-
նուշ անում, այն էլ մեծ մասամբ մաքուր մեղր:
Աշխատաւորներն են սրանց կերակրում, թշնամի-
ներից պաշտպանում, բնակարանում տեղ տալիս,

*) Տես պատկեր 1

պահում, պահպանում են: Արուների միակ օգուտը այն է, որ թագուհու հետ միանալով՝ նրան արական սերմ են տալիս. այս բանի համար մէկ հատն էլ բաւական է, բայց թագուհին հարսանիքի դուրս գալիս աւելի մեծ բազմութիւն է սիրում: Այդ օրերն անցնելուց յետոյ՝ նրանք փեթակին անօգուտ, զուր տեղը կերակուր փչացնող, տեղ բռնող են լինում. դրա համար էլ աշխատաւորներն իրանց անգործ ընկերներին երկար չեն պահում. մէկ էլ տեսար, օգոստոսին կամ սեպտեմբերին նրանց փեթակից հեռու քշեցին կամ կոտորելով՝ դուրս թափեցին: Այս կոտորածն աւելի շուտ կը լինի, երբ վատ եղանակներ լինին, երբ քիչ մեղրը են պատրաստած, էլ չեն համբերում, որ արուները ծոյլ անպէտքների նման իրանց ձմեռուայ պաշարը քչացնեն: Արուների բնակարանները վեց անկիւն ունեցող մեծ խցիկներ են. մեղուապահները դրանց հեշտ ճանաչելով՝ շատ անգամ արուներին խցիկներից դուրս չեկած ոչնչացնում են, որպէսզի զուր տեղը մեղր չպակասեցնեն:

ՄԵՂԱՌՆԵՐԻ ՀՈՐՄՆԻՔԸ.

Մեղուն էլ հարսանք ունենալ, պիտի ասեն մեր ընթերցողներից շատերը. ինչպէս, մթթէ նրանք այդպէս բան կարող են անել, արդեօք դա սուտ չէ և այլ այսպիսի հարցեր:

Մենք մի քանի խօսքով այդ էլ կ'ասենք. դու կըտեսնես, որ նրանք էլ հարսանիքով ուրախանում, անյաջող գէպքում տխուր, տըրտում՝ անգամ սրտի ցաւից մեռնում են:

Արդէն մայր թագուհու, աշխատաւորների և արուների նշանակութիւնը իմացանք. նոյնպէս տեսանք, որ ամենքն էլ այդ ամբողջ խմբի համար անպատճառ հարկաւոր են. այսպէս հարկաւոր սովորութիւններից մէկն էլ նրանց հարսանիքն է: Երբ արուներն ու թագուհիները խցիկներից դուրս են գալիս, մի երկու օր յետոյ սկսում է հարսանիքի հանգէսը: Աշխատաւորների մի մասը շարունակ կերակուր, ծաղկափռի, շինութեան պաշար, այսինքն մեղր, մոմ և բնակարան պատրաստելու յետեւից է ընկած. մի ուրիշ մեծ մասն էլ սուս, փուս, ուշադիր կերպով թագուհու և արուների գործին է նայում: Վերջապէս երբ օրը տաքանում է, երբ կարմիր արևը իր տաք, փայլուն ճա-

ազգայնությունը աշխարհին թմրութիւնից զարթեցնում է, երբ ամենքը կեանք, ոգի են առնում, ուրախանում, ահա այդ ժամանակ բոլոր արուները ջահիլ թագուհու հետ ուրախ տրգտաւում՝ աղմուկով դուրս են գալիս փեթակից: Մեր թագուհին թէև երիտասարդ, բայց խելացի է. նա այդպէս առօք-փառօք, արուներով շրջապատուած՝ մեծ հանդիսով նախ փեթակի շուրջը պտոյտ տալով՝ թուզկոտում է, ամեն ինչ լաւ նայում, թէ ի՞նչ կայ նրա չորս կողմը, ի՞նչ ծառ, փայտ, տուն և այլն. յետոյ աւելի հեռանում, շրջան է տալիս, նորից նայում, նորից տեսնում է, թէ իր բնակարանի ճանապարհը ի՞նչ նշաններ ունի, որ յետ դառնալիս չմոլորուի: Այսպէս նա իր փառքով վեր է բարձրանում ու մի քանի ժամ հարսանիքի ուրախութիւնը վայելում. ահա այս ժամանակ արուներից մէկի հետ միանալով՝ սերմնարանի մէջ սերմ է հաւաքում:

Իրանց հակառակ խեղճ աշխատաւորների մեծ մասը փեթակի շուրջը կամ մէջը սաստիկ տխուր սպասումեն թագուհու վերադարձին. սրանք շարունակ ահ ու դողի մէջ են: Երբ հարսանիքաւորները մի փոքր ուշ վերադառնան, էլ ինչե՞ր ասես, որ խեղճերի մտքից չի անցնիլ. «Զինի թէ թշնամի մեղուները թագուհուն փախցրին կամ թուջուն-

ները նրան վնասեցին, թէ ջրի կամ հողի մէջ ընկաւ, ոչնչացաւ. էլ ի՞նչ ասես, խեղճերի վրայ ջուր է մաղում, սաստիկ յուսահատումեն: Մանաւանդ երբ յանկարծ եղանակը փոխւում, քամի է բարձրանում, անձրև գալիս, ահա այդ ժամանակ նրանք աւելի խղճալի դրութեան մէջ են ընկնում. ո՞չ մի ձայն, ո՞չ մի ծպտուն չեն հանում. «Մեր տունը կը քանդուի, մեր աշխատանքը ջուրը կը լցուի, եթէ թագուհուն վնաս պատահի. ահա խեղճերի սպասողական, անհամբեր դրութիւնը: Իսկ երբ մէկ էլ հեռուից հարսանիքաւորների ուրախ ձայնը առնում են, նոր ոյժ ստացած՝ իրանք էլ ուրախ, զուարթ դէմ գնում, ուրախութեանը մասնակից լինում և որպէս նորապսակ թագուհու՝ իրանց փեթակին հոգի տուող պահապանի ամեն տեսակ ցոյցերով տուն են բերում: Ջահիլ թագուհին հեշտութեամբ ներս չի գնում փեթակ. նա նորից հպարտ հրպարտ իր խմբի հետ պտոյտ է տալիս փեթակի չորս կողմը, ամեն բան լաւ նայում, զննում և երբ տեսնում է, որ ամեն ինչ իր տեղումն է, նոր է փեթակ մտնում. եթէ մի որևէ փոփոխութիւն պատահի, նա չէ վստահանում ներս գնալ, այլ իր խմբով նորից յետ է դառնում, նորից գալիս և երբ բոլորը առաջուկ դրութեան մէջ չէ տեսնում, թողնում, հեռանում է, փեթակը մարում է: Մի շատ փորձառու

մեղուապահ պատմում է. «Հարսանիքի ժամանակ սխալմամբ փեթակի անցքի մօտ փոքրիկ դանակս մոռացել էի. թագուհին իր խմբի հետ հինգ անգամ վար իջաւ, չորս կողմը նայեց, ամեն ինչ կարգին գտաւ, բայց դանակիս պատճառով նա նորից վեր բարձրացաւ և երևի կըհեռանար, եթէ ես ուշքի չգայի և դանակս այնտեղից չհեռացնէի. և իսկապէս վեցերորդ անգամ ազատ կերպով ներս մտաւ:»

Մեղունների այս ուրախ խմբով վեր բարձրանալ տեսնողը, չի կարող կասկածել նրանց ուրախութեան, նրանց հարսանիքի հանգիսի վրայ:

Շատ անգամ պատահում է, որ թագուհին առաջին օրը չէ բեղմնաւորուում, կամ վատ եղանակ լինելով՝ նրանք վերւում չեն կարող երկար մնալ. ահա այդ ժամանակ կրկին միւսնոյն հանդէսը կրկնւում է և այս կարող է չորս կամ հինգ շաբաթ տւել: Այս պատճառով խելացի աշխատաւորները արուններին վնաս չեն տալ. սրանց էլ խնամում, կերակրում են: Նրանք շատ լաւ հասկանում են, թէ արունները դեռ իրանց պէտք են: Իւրաքանչիւր թագուհի իր կեանքի մէջ մի անգամ է հարսանիքի հանդէս կատարում և արական սերմ հաւաքում, որը բաւական է նրան ամբողջ կեանքի համար:

7. ՄԵՂՈՒՆՆԵՐԻ ՁՈՒՆ ԵՒ ՆՐԱ ԶՈՐԳՈՑՈՒՄԸ:

Հարսանիքից յետոյ՝ արական սերմով ծանրացած թագուհին երկու օրի չափ հանգստանում է և ապա սկսում է ձուեր ածել: Աշխատաւորների վեցանկիւնանի փոքրիկ խցիկների մէջ մտնելով՝ ամեն մէկում մի մի բեղմնաւորուած ձու է ածում, նոյն տեսակ ձու էլ թագաւորական խցիկների մէջ, իսկ արունների խցիկներում չբեղմնաւորուած ձուեր: Այսպէս մի քանի օրուայ մէջ հազարաւոր ձուեր ածելով՝ իր գործը վերջացնում, հանգստանում է: Զորս կամ հինգ օր յետոյ ձուերից դուրս են գալիս սպիտակ, շատ փոքրիկ որդեր կամ թրթուրներ. ահա այս ժամանակուանից աշխատաւորների գործի տուտը բացւում է:

Նրանց մի մասը դրսից կերակուր, ծաղկափռ չէ բերում, իսկ միւսներն էլ ծաղկի փոշուց, մեղրից և ջրից իրանց կերակրի ստամոքսում խմորի նման մի նոր տեսակ փափուկ կերակուր պատրաստելով՝ մեծ խնամքով փոքրիկ թրթուրներին երեք կամ չորս օր կերակրում են:

Լաւ կերակրելուց, կանոնաւոր հոգ տանելուց է կախուած առողջ սերունդ ստանալը. նամանաւանդ ամենից շատ ուշք են դարձնում թա-

գուհի թրթուրների վրայ, նրանց կերակուրը աւելի մաքուր, աւելի շատ են անում: Այսպէս բնակարանի մեծութիւնը, կանոնաւոր խնամատարութիւնն ու սնունդը միւսնոյն ձուերից փոխանակ հասարակ աշխատաւորների, խոշոր, մեծ, լաւ կազմուածքով թագուհիներ են տալիս: «Եթէ այդպէս է, ուրեմն կարելի է աշխատաւորների խցիկների մէջ գտնուած ձուերից էլ թագուհիներ պատրաստել», գուցէ մեզ հարցնող լինի. այո՛, անպատճառ այդպէս էլ կրկին, եթէ նրանց բնակարանը մեծացնեն և այնպէս ուշք դարձնեն ու կանոնաւոր կերակրեն, ինչպէս թագուհու համար են անում, ապա թէ ոչ՝ չի լինիլ: Ութը կամ տասն օր յետոյ փոքրիկ թրթուրները բաւականին մեծանալով՝ բերաններից մի տեսակ հեղուկ նիւթ են դուրս տալիս, որը օդի մէջ բարակ թելի նման սառչում է:

Այդ թելերով նրանք իրանց չորս կողմը ցանցի նման փաթաթում և մէջն են մտնում: Այս դրութեանը մարդիկ ասումեն, թէ նրանք բոժոժի մէջ են մտած: Այսպէս են անում մետաքս պատրաստող շերամը, մըջիւնները և այլն:

Թրթուրները բոժոժի մէջ մտնելուց յետոյ՝ աշխատաւորները նրանց խցիկների բերանները բարակ մեղրամոմով փակումեն: Ութը կամ տասն

օր այդ դրութեան մէջ մնալով՝ ամենից առաջ աշխատաւորների խցիկներից դուրս են գալիս կենդանի, պատրաստ մեղուներ. սրանից երեք կամ չորս օր յետոյ էլ դուրս են գալիս թագուհի մեղուներ, իսկ սրանցից էլ երկու կամ երեք օր յետոյ՝ արուներ: Շատ հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս մեղուները իրանց բնակարանի փակած բերանները ներսից ծակելով՝ դուրս գալ են ուզում. նրանցից շատերը ոյժ չունենալով՝ մարմնի կէսը դուրսը, կէշատերը ոյժ չունենալով՝ մարմնի կէսը դուրսը, կէսը ներսն են մնում. ոմանք էլ միայն մի ծակ բաց արել, ներսում մնացել են. ուրիշներն էլ շատ թույլ լինելով՝ իրանց խցիկների բերանի մեղրամոմը անվնաս են թողել և սպասումեն բարի աշխատաւորների օգնութեանը:

Իսկապէս աշխատաւորները ամեն կողմից վրայ հասնելով՝ ոմանց խցիկների ծակը մեծացնում, մատաղ մեղուներին դուրս են բերում. մի քանիսն էլ մատաղ վերաները մաքրում, կերակրում են: Տեսնրանց վերաները մաքրում, կէրակրում են: Տեսնում ես, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են, ուրիշ տեղում էլ ոմանք հաւաքում են:

Պատահում է, որ աշխատաւորները իր ժամանակին չեն կարող բոլոր խցիկների դռները բաց

անել և օգնել, ահա այդ ժամանակ նրանցից շատերը իրանց օրօրոց-խցիկի մէջ խեղդւում, մեռնում են. մանաւանդ այս բանը աւելի արուների հետ է պատահում: Այսպիսի դէպքում նրանց օգնում են մեղուապահներն էլ. սրանք բաց են անում փեթակը և մեղրահացերի վրայ գտնուած խցիկների բերանները ասեղի ծայրով զգուշ կերպով պատառում, օգնում են ջահիլ մեղուների դուրս գալուն:

Թագուհու ձուռածելուց 16 կամ 18 օր յետոյ դուրս են գալիս աշխատաւոր մեղուները, 20 կամ 21 օրից յետոյ թագուհիները, իսկ 22 կամ 24 օրից յետոյ արուները: Աշխատաւորները դուրս գալուց յետոյ՝ իսկոյն չեն կարող գործ սկսել. նրանք մի երկու օր փեթակում մնալով՝ ոյժ են հաւաքում, կազդուրւում և ապա մի մասը փեթակի ներսի աշխատանքը, միւսներն էլ դրսին են սկսում: Մայր թագուհին էլ տեսնելով, թէ մօտեցել են իր աղջիկ թագուհիների դուրս գալու օրերը, ուզում է մտնել նրանց բնակարանների մէջ և դեռ օրօրոցի մէջ գտնուած թոյլ, անզօր թագուհիներին ոչնչացնել, որ յետոյ իրան հակառակորդ չունենայ: Այս տեսնելով աշխատաւորները՝ նրան թոյլ չեն տալիս այդ անելու: Մէկ էլ տեսար, նրանք խմբերով նոր թագուհիների բնակարանների բերան-

ները հաստ մեղրամոմէ պատերով իսկոյն ծեփում, ամրացնում են և դրանց մօտ պահապաններ դնելով՝ թագուհու չար մտադրութիւնը խանգարում են: Պատահում է, երբեմն մայր թագուհին կարող է իր աղջիկ թագուհիներին ոչնչացնել, բայց ինչպէս ասացինք, շատ անգամ աշխատաւորների քաջութիւնով ու աշխատանքով նրանք ազատւում են:

Երբ ջահիլ թագուհիների դուրս գալու օրերը մօտենում են, աշխատաւորները զգուշ կերպով բաց են անում նրանց բնակարանների վրայի հաստ մեղրամոմէ դռնակները: Ջահիլ թագուհիները դուրս են գալիս. այժմ փեթակի մէջ լինում են մի քանի թագուհիներ, ամենքն էլ շրջապատուած են աշխատաւորներով:

Այս ժամանակ մօր և աղջիկ թագուհիների մէջ կատաղի կռիւ է բացւում. ամեն մէկն ուզում է ինքը փեթակին տիրապետէ, ինքը իշխող, կառավարող լինի. մանաւանդ մայր թագուհին չէ ուզում հեշտութեամբ իր իշխանութիւնը նրանց տալ: Կռուի ժամանակ նրանք առանց խնայելու մէկ մէկու վրայ են յարձակւում, խայթոցներով իրար վիրաւորում, ոչնչացնում են:

Ջարմանալի է այս ժամանակ աշխատաւորների բռնած խելօք դիրքը. նրանք հանդարտ, սառն կերպով մի կողմ քաշուած, նայում են թագու-

Հինների կռուին և յաղթողին են հնազանդուում, իրանց տիրուհի ճանաչում: Այսպիսով նրանք թագուհիներից ամենազօրեղին են ընտրում, որպէսզի աւելի առողջ, ուժեղ սերունդ ունենան:

Որչափ խելացի, խրատական է փոքրիկ մեղունների արարքը... Շատ անգամ նոյն իսկ մարդիկ այս կամ այն շահից դրդուած՝ իրանց որդիներին նշանելիս, մանաւանդ աղջիկներին մարդու տալիս՝ էլ չեն հարցնում նրանց կամքն ու ցանկութիւնը: Ել չեն մտածում առողջ, զօրեղ սերունդ ունենալու մասին, այլ գերադասում են հարստութիւն, պաշտօն կամ այլ բան. դրանով զոհում են ո՛չ միայն իրանց զաւակների երջանկութիւնը, այլև նրանց ամբողջ սերունդը: Հետեւանք տխուր է լինում. որպէս թոյլ, հիւանդոտ մարդիկ, կեանքից զրգուած, ջահել ջահել պառաւածներ՝ գործելու, աշխատելու սիրտ ու հաւաս չեն ունենալ. իսկ ինչ կըլինի սրանց սերունդի դրութիւնը... Եւ հարկէ, բացի ժառանգական պակասութիւններից, մարմնով թոյլերը շատ էլ հեշտ հիւանդութիւններ կտանան: Բաւական է, որ մի թեթեւ առիթ լինի:

Պատահում է, որ փեթակի Հին թագուհին չուզենալով կամ չկարողանալով իր աղջիկներին հետ կռուել, աշխատաւորներին մի մասի, մանաւանդ

Հների հետ, խմբով դուրս է գալիս ու գնում նոր փեթակ գտնում, նոր տուն ու տեղ լինում. իսկ փեթակի մէջ մնացած միակ երիտասարդ թագուհու առաջին դործն է լինում մտնել միւս թագաւորական բնակարանները ու իր քոյրերին օրօրոցի մէջ սպանել, հակառակորդներից ազատուել. այս գէպքում էլ աշխատաւորներն թոյլ չեն տալ: Միւս թագուհիներն էլ են դուրս գալիս նոյն կռիւր, նոյն գէպքերն են կրկնում: Պատահում է, որ այս գէպքում էլ նոր թագուհիներից մէկը կամ միւսը իր կողմնակի արու և աշխատաւոր ընկերներով դուրս թռչում, նոր բնակարան է ճարում: Երբեմն էլ թագուհիները իրար հետ կռուելիս երկուսով էլ պատերազմի մէջ ընկնում են: Այս ժամանակ ահա աշխատաւորների մէջ իրարանցում է ընկնում, նրանք անհանգիստ ենք ու դուրս են անում, խումբ խումբ այս ու այն կողմ թռչկոտում: Բան ու գործ թողած ցաւալի ձայնով իրանց դուրս են ողբում: Այս բանի առաջն իրանք իրանց կառնեն, եթէ դեռ բոլոր թագուհիները ձուերից դուրս չեն եկել կամ թէ չէ նոյն իսկ աշխատաւորների թրթուրներ դեռ կան: Սրանց բնակարանները լայնացնում, շատ լաւ կերակրում, խնամք տանում ու մի քանի օրից յետոյ նոր թագուհի են ունենում: Երբ սրանք չլինին, էլ ոչ

մի հնար չեն ունենալ. մի մասը ցրում, մի մասն էլ փեթակի մէջ սրտի ցաւից մեռնումէ: Այսպիսի դէպքերում հասկացող մեղուապահները օգնում են: Նրանք այդ փեթակի մէջ կամ նոր թագուհի են դնում և կամ ուրիշ փեթակներից մի քանի աշխատաւորների ձուեր են տեղափոխում այդ տեղ. հէնց որ մեղուները այս տեսնում են՝ իսկոյն հանգստանում, ձուերին խնամք են տանում ու նոր թագուհի ստանում կամ թէ չէ՝ տէրերի դրած պատրաստի թագուհուն մի քանի օրից լետոյ ծանօթանալով՝ նոյն կարգ ու կանոնը շարունակում են: Երբ մեղուները հանգստանում են, նորից սկսում է հարսանիքի հանգէս, թագուհին նորից ձուեր է ածում, նորից մեղուներ են դուրս գալիս և նոյն բաները առաջուալ նման կրկնում են:

8. ՄԵԼՈՒՆԵՐԻ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՏՆԵԼԸ.

Ինչպէս տեսանք թագուհիները երբեմն իրանց կողմնակից արու և աշխատաւոր մեղուների հետ դուրս են գալիս նոր բնակարան ձարելու: Այս ժամանակ ամենքը թագուհուն իրանց մէջ առած միշտ նրան են հետեւում. որտեղ թագուհին նստի, ամենքն էլ նրա չորս կողմը բռնած, սպասում են, կարծես իրանց դուրսեան մասին խորհուրդ են անում: Երբեմն էլ այդ խորհուրդը ծառերի վրայ լինելով՝ նրանց ճղները պրտաւոր ծառերի նման ծանրացնելով՝ կախ են ձգում: Մինչդեռ մեծ մասը թագուհու հետ մի քանի ժամ նստած հազստանում է. աշխատաւորների միւս մասն էլ անդադար այս ու այն կողմն ընկած նոր բնակարան է փնտռում: Երբ մի ծառի ճեղք, ժայռերի արանք կամ սրա նման բան գտնում են, գալիս ընդհանուրին իմաց են տալիս: Մի քանիսը նրանց հետ գնում, նորից վերադառնալով՝ բոլոր խմբով դիմում են այնտեղ: Եթէ նոր բնակարանի մեծութիւնը, դիրքը յարմար լինի, աշխատաւորների առաջին պարտքն է լինում գործ սկսել, ծակ ու ճեղք մոմով ծածկել, մաքրել և մեղրահացեր պատրաստել: Այս անելուց

յետոյ՝ նորից հարսանիք, նորից ձուեր ածել, նոր սերունդ հանել, ածել, բազմանալ. միւսնոյն կռիւն ու բաժանումը:

Որպէսզի մեղուները իզուր տեղը չկորչին, մարդիկ առաջուց մօտիկ յարմարաւոր տեղում կամ նոյն իսկ հին փեթակի մօտ նոր փեթակ են պատրաստում: Մեղուները թագուհուն հետ դուրս գալով՝ մտնում են այնտեղ. եթէ մաքրելու կարիք չկայ, իսկոյն սկսում են իրանց գործը: Երբեմն պատահում է, թագուհին բարկացած լինելով՝ իր խմբով հեռանում է. ահա այս ժամանակ նրանք շատ կատաղի են լինում և անխնայ կերպով պատահողին խայթում ցաւեցնում են. չնայելով դրան, մարդիկ նրանց խորհրդի տեղին մօտիկ դնում են պատրաստի փեթակ և շատ անգամ նրանց յաջողում է ամբողջապէս բռնել ու տուն բերել: Հասկացող մեղուապահները ակելի հեշտ, անփնառ կերպով թագուհիներին իրարուց բաժանում, նոր փեթակ են կազմում: Առանց այս մանրամասնութիւնների յետեւից ընկնելու, որը մեր այժման նպատակը չէ, շարունակենք մեր գործը. իսկ դրանց մասին յարմարաւոր գէպքում առանձին գրքով կը խօսինք:

9. ԻՆՉՊԻՍ Է ՊԼՏՐԵՍՏՈՒՄ ՄԵՂԻ ԵՒ ՄԵՂԻՄՈՒ:

Վերելում ասացինք՝ թէ մեղուների մի մասը երկու ստամոքս ունի. մէկը մեղրի, միւսը կերակրի համար: Այդ տեսակ մեղուները միայն մեր ղոչաղ, ամեն բանի հասնող, ամեն ինչ կատարող աշխատաւորներն են: Երբ փեթակը կարգի եկած վերջացած է, երբ նրանց սիրտը բոլորովին հանգիստ է, ահա այդ ժամանակ սկսում է ամենքի ժրջան աշխատութիւնը: Մօրդ գլուխը նրանց վերին աստիճանի անդադար աշխատանքը տեսնելով կամայ ակամայ ինքն իրան մտածում է. «Սրանք իրանց փոքրիկ տեղով այնչափ եռանդուն աշխատում չարչարում են իրանց և իրանց սերնդի համար, իսկ մենք մարդիկս հապա որչափ պիտի աշխատենք. չէ, աշխատանքը պէտքէ. առանց աշխատանքի մարդ չի կարող ապրել, աշխատողը կարող է ուրախ, առողջ լինել»: Այսպէս մեր պատիկ աշխատաւորները խումբ խումբ դուրս գալով փեթակից, ցրւում են կանաչապատ, ծաղկալի դաշտերն ու մարգագետինները, անտառներն ու զով տեղերը: Գոյն գոյն, նաշխուն ծաղիկների վրայ թառելով, նրանց պտղատու ծառի նման կռացնում, մէջը մտնում,

Համբուրում են նրանց ծաղկապսակի*), փոշանոթի և վերջապէս սպիի հետ: Ծաղիկներն էլ իրանց փոքրիկ սիրական հիւրին ուրախութիւնով ընդունում, գրկում պաչում-պաչպչում են ու շաքարանքման քաղցր հիւթը, ծաղկափոշին առատ առատ

*) Ծանօթութիւն

Նթէ մենք որեւէ ծաղիկ ձեռքերս առնենք և ուշադիր նայենք, այն ժամանակ դրսի կողմից ամենից առաջ մենք նրա տակի մասում չորս, հինգ կամ աւելի կանաչ տերեւներ կը տեսնենք. այդ կանաչ տերեւները իրանց ամբողջ մասով բաժակի ձև ունին և բոլոր ծաղկի մասերը նրա մէջն են տեղաւորուած. ահա ծաղիկ այդ կանաչ տերեւներով մասն առնում է ծաղկի բաժակ. կտրենք բաժակի տերեւները, այն ժամանակ ծաղիկ վրայ կը մնան մի քանի գուն ուր փոքրիկ տերեւներ: Սրանք որովհետեւ ծաղկի զարդարանքն ու գեղեցկութիւն են կազմում, դրա համար ասում են ծաղկի պսակ կամ ծաղկապսակ: Բաժակը ու ծաղկապսակը ծաղկի գլխաւոր մասերը չեն, որանք միայն նրա ներսի միւս մասերին պաշտպանողներն են, որովհետեւ երբ ծաղկից ուրեմ կամ պտուղ է առաջ գալիս, ահա այդ ժամանակ նրանք թառամում ու թափում են, իսկ պտուղ լինող գլխաւոր մասերը ծաղկի ներսումն են: Հիմա պոկենք ծաղկապսակը, այն ժամանակ շատ պարզ կերպով կը տեսնենք կոթ, ջրջանաձև իրար մօտ շարուած 5, 10ը, 20 կամ աւելի շատ բարակ գնդասեղի նման փոքրիկ թելիկներ, ու

նրան տալիս:

Քիչ է մնում, ընթերցող, ասես, թէ ուրեմն մեղունները ծաղիկների հիւթը ծծելով՝ նրանց չորացնում վնասում են: Ո՛չ, բոլորովին հակառակը. դու ներքի մեզ մի երկու խօսքով առաջ այս պարզենք, ապա դառնանք մեր գործին: Ծաղիկները

րոնց վերին ծայրի վրայ գտնւում են շատ փոքրիկ քրնքոյշ, գունաւոր պարկեր. դրանց մէջ կան շատ մանր, հոտաւէտ փոշիներ. սրանց հասած ժամանակ մարդ հասարակ աչքով անգամ կարող է տեսնել. բաւական է, երբ մարդ ծաղիկը շարժէ, գունաւոր փոշին վար կը թափուի. այդ փոշի ունեցող պարկն ասում է փոշախօթ. փոշանոթն էլ իր բարակ թելիկով միասին ասում է առէջը: Հիմա լաւ նայենք առէջները վրայ, մենք նրանց մէջտեղը կը տեսնենք մի աւելի հոտ թելիկ, որի ծայրը փոշանոթի տեղ մի շատ փոքրիկ բաց բերան ունի. այդ բերանին ասում են սպի: Այժմ բոլոր առէջները կտրենք և միայն մեջքին հաստ թելիկը իր սպիով թողնենք. սպիի թելիկը դատարկ, շատ նեղ խողովակ է. այդ խողովակի տակն էլ գտնւում է փոքրիկ կանաչ գոյնով մի ուռույց, որի մէջ գտնւում են շատ մանր գնդակներ կամ ծաղկի ձուեր. դրա համար սպիի բարակ խողովակի տակ գտնուած այդ ուռած մասը ասում է ծաղկի ձուաւ: Ուրեմն ծաղիկներն էլ իրանց մէջ մարդկանց, կենդանիների և մեղունների նման ձուարան ունին:

կարծես, մեծ ուրախութիւնով, անհամբեր սպասում են մեղուներին կամ նրանց նման միջատներին:

Այդ պատճառով նրանք ոչ թէ միայն նաշխուն ծաղկապսակներով զարդարւում են, այլև դուրեկան հոտեր բուրելով՝ գրաւում, կանչում են իրանց կեանք տուող մեղուներին. և գիտէք ինչու. մեղուները գալիս են իրանց համար կերակուր տանելու, բայց դրանով նրանց էլ օգնում, մուրազներին հասցնում են: Այլ ինչպէս:

Ամենքս էլ գիտենք, որ աշխարհի վրայ հազարա-

ներ առէջքների փոշանօթների փոշին հասնում է, այն ժամանակ ինքն իրան կամ քամու, միջատներ թռչել շարժումը փոշու գնդակների մի մասը թափւում է սպիւն բերանի վրայ: Սպիւն խողովակի մէջ կայ շաքարե կամ մեղրի նման քաղցր հեղուկ. ծաղկի փոշին մեկնում է այդ հեղուկի հետ և հանգիստ վար է գնում դէպի ձուարան. այստեղ ձուերը մեկնալով այդ փոշու հետ, բեղմնաւորում, սերմ կամ պտուղ են տալիս: Ուրեմն բոյսերն մէջ ծաղկի փոշին առական սերմի տեղն է, որը ձուերի հետ մեկնաւորով պտուղ է աւաջ բերում. առանց այդ փոշու ոչ մի ժամանակ ոչ սերմ և ոչ էլ պտուղ կ'պտանայինք: Իսկ սպիւն իր խողովակով ու ձուարանով ծաղկի իգական գործարանն է: Տեսանք. որ բոյսերն էլ իգական, արական գործարաններով են շատանում ու բազմանում:

ուր տեսակ դաշտային, պարտէզի ծաղիկներ, բազմաթիւ պտղատու ծառեր կան: Այս մենք գիտենք, բայց շատերս չգիտենք, թէ ինչպէս են ստացւում նրանց սերմերը, քաղցր պտուղները: Կան ծառեր և ծաղիկներ, որոնց առէջքների արական փոշին ու իգական գործարան սպիւն իր ձուարանով միեկնոյն ծաղկի մէջն են գտնւում. այդ դէպքում շատ անգամ փոշին հասնելով թափւում է իգական գործարանի վրայ և բեղմնաւորւմ է, կամ թէ քամին շարժելով նոյնն է անում. ահա այստեղ մեր մեղուներն ու միջատներն էլ շատ են օգնում: Նրանք ծաղիկների գոյնից, հոտից գրաւուելով՝ գալիս նստում են նրանց վրայ և գրլուխները կոխելով ծաղկի սպիւն մէջ, այնտեղ գլուխն առնալով քաղցր հեղուկը ծծում, առաջին ստամոքսի մէջ պահում են: Առէջքների փոշին թափւում է նրանց մարմնի վրայ, մանաւանդ թաւամազ ոտքերը ամբողջապէս փոշով է ծածկւում: Ծաղկի միջից դուրս գալիս շարժւում են առէջքները, նորից առատ փոշին թափւում է նրա և ծաղկի վրայ, փոշիներից մի մասն էլ ընկնում է սպիւն ծաղիկին. իսկ ծաղկի բեղմնաւորութեան համար բաւական են մի քանի մանրիկ փոշու հատիկներ: Բացի դրանից մեղուն առէջքներից էլ փոշի է հաւաքում. այս ժամանակ էլ նոյնպէս փոշի թափուելով, նոյն գործը

կատարւումէ։ Դեռ սա բոլորը չէ. կան շատ ծառեր ու ծաղիկներ, որոնց ճիւղերից մի քանիսը միայն իգական ծաղիկներ ունին. այս դէպքում որչափ էլ արական փոշին հասնի՝ չի կարող ինքն իրան բեղմնաւորուիլ. ահա այս ժամանակ մեր ժրջան աշխատաւոր մեղուները բարեխիղճ աշխատաւորի դեր են կատարում. արական ծաղկի վրայ նրստելով՝ առատ փոշի են հաւաքում. իսկ երբ իգականի վրայ են գալիս, նրա մեղրահիւսթը ծծում կշտանում են, սրա փոխանակ, շարժուելիս՝ ոտքերի կամ մարմնի վրայից փոշիներ են թափում իգական գործարանի վրայ։ Իգական ծաղիկը իր արական փոշուց մի քանի գնտակներ ստանալով՝ բեղմնաւորւում է։ Կան ծաղիկներ ու պտղատու ծառեր էլ, որոնց մէկի վրայ միայն իգական, միւսի վրայ արական ծաղիկներ կան. այս դէպքում էլ նոյն կերպ մեղուներն իրանք օգտուում, նրանց էլ իրանց մուրազին հասցնում են։ Շատ անգամ գիտնականները փորձով տեսել են, որ պտղատու ծառերի, պարտէզի ծաղիկների կամ բանջարեղէնների ծաղկած ժամանակ երբ խոնաւ և անձրեւ եղանակ է լինում, երբ քամիներ էլ չեն առաջ գալիս, ահա այդ կողմերում եթէ մեղուներ չլինին, ծառերը, ծաղիկներն ու բոյսերը այդ տարին պտուղ չեն տալ. դրա հակառակ մեղուներ կամ ուրիշ

միջատներ եղած ժամանակ, նրանք բեղմնաւորուելով պտղաբեր են լինում։

Մի փոքր լաւ մտածիր, ընթերցող, կըտեսնես, թէ նրանք այս դէպքում որչափ գործ են կատարում, որչափ օգուտ տալիս։ Դու իմացար, որ մի լաւ, առողջ փեթակի մէջ երկու հարիւր հազար աշխատաւորներ կան, իսկ այս տեսակ հազարաւոր փեթակներ կան. եթէ ամեն մի աշխատաւոր, ասենք, օրական 50 ծաղկի մօտ է եղել, նրանց բեղմնաւորել, ուրեմն մի մեղուն ամբողջ քարունն ու ամառը քանի՞ հազար ծաղիկների բեղմնաւորում, նրանց կեանք տալիս, մեզ էլ օգուտ. իսկ եթէ հաշուենք բոլոր փեթակների մեղուների տուած օգուտը... Աւելորդ է այստեղ երկար ու բարակ հաշիւների մէջ ընկնել, ուստի շարունակենք մեր գործը։

Մեղուների տուած օգուտը իրանց սիրելի ծաղիկներին տեսանք. իսկ իրանք ծաղկի հիւսթը ծծելուց լետոյ դեռ չեն բաւականում. նրանք այդչափ քիչ պաշարով տուն չեն դառնում, պէտքէ դեռ ուրիշ քնքոյշ հիւսթի ծաղիկների էլ այցելեն։ Այսպէս մի քանիսը քաղցրահամ հիւսթը ծծելուց լետոյ նստում են ծաղկի պսակաթերթերին, վերաները թափուած ծաղկափոշին սանրի նման լետին ոտքերով սանրում, հաւաքում, փոքրիկ

գնդակներ են շինում, ոտքերի փոսիկների մէջն ու չորս կողմը կպցնում, մնաս բարով ասելով իրանց սիրելի ծաղիկներին՝ գնումեն ուրիշների մօտ. այս կերպ միքանիսից նոյն նիւթերը հաւաքելով, մեղրով ու գոյնգոյն փոշիներով ծանրաբեռնուած հանգարա, տըզտզալով փեթակ են վերադառնում։ Ով փեթակի մօտ կանգնել է, նա տեսած՝ կրկինի նրանց ալ ու կանաչ փոշիներով հաստացած ոտքերը։

Նրանք ներս են մտնում փեթակ, մօտենում են մի ժամանակ իրանց կամ արուներին օրօրոց եղած խցիկներին, առաջին ստամոքսում հաւաքած քաղցր մեղրահամ նիւթը բերաններից կաթ կաթ դուրս բերելով՝ թափումեն նրանց մէջ. սըրանից լետոյ գնումեն ուրիշ խցիկների մօտ կանգնում, ոտքերը ցնցելով՝ ծաղկի փոշին թափումեն սրանց մէջ. մի փոքր հանգստանալուց լետոյ նորից դուրս են գալիս, նորից նոյն գործն ու աշխատանքը կատարում։

Այժմ գործը ընկնումէ տանը մնացած աշխատաւորներին։ Սրանք միւսների բերած ջրուրի քաղցրահամ ծաղիկների նիւթը նորից իրանց մեղրի ստամոքսը տանում, աւելի թանձրացնում և կրկին խցիկների մէջն են դառարկում. այսպիսով մեղրը պատրաստ է։

Եթէ ծաղիկներից բերած քաղցր հեղանիւթը

ջրի չէ, նա արդէն պատրաստի մեղր կը համարուի։ Ներսի աշխատաւորները մեղրով լիքը խցիկների բերանը կարճ ժամանակ բաց են թողնում, որ մեղրի ջրային մասը գոլորշիանայ. ապա մեղրաւամօմէ բարակ փառով կամ շերտով ծածկումեն, որ նա չկծուի ու չվնասուի. բացի դրանից ամեն կողմից լաւ ծածկուած մեղրահացերը ձմեռ ժամանակ փեթակն աւելի տաք են պահում։ Իսկ ինչո՞ւ համար է ծաղկափոշին. դա էլ մեղուների կերակուրն է լինելու։ աշխատաւորները դրանից, ջրից ու մեղրից իրանց երկրորդ ստամոքսում փափուկ կերակուր են պատրաստում և նոր դուրս եկած աշխատաւորների թրթուրներին կերակրումեն։ Թագուհին, արուները դրանից քիչ են ուտում, նրանք աւելի շատ մաքուր մեղր են գործածում։

Ծաղկափոշին առանձին խցիկների մէջ պահուելով՝ ձմեռուալ համար կերակրի պաշար է լինում։ Մեղրամօմի պատրաստելն էլ այսպէս է կատարում։ Երբ մօմի հարկաւորութիւն լինի, երբ նոր բնակարան պէտքէ շինել կամ հնացած տեղերը կարկատել, փոխել, ահա այդ ժամանակ դարձեալ աշխատաւորները իրանց սովորական կերակրից աւելի շատ են ուտում. կերակրի մի մասը իրանց մարմնի պահպանութեան համար է գնում, իսկ միւս

աւելորդ մասն էլ առանձին գործարանի մէջ մի տեսակ ջրալի նիւթ է դառնում: Այդ նիւթը մեղունների փորի օղակներից քրտինքի նման կաթ կաթ դուրս է գալիս և օգի հետ շփուելով՝ սառչումէ. հէնց դա է մեր մեղրամոմը:

Մեղունները դրան իրանց յետին ոտքերով մաքրում, փոքրիկ գնդակների ձևով խցիկների մէջ հաւաքում, պահումեն և հարկաւոր ժամանակ գործածում:

Շինութեան ժամանակ հաւաքումեն աշխատաւորները, պատրաստի մոմը բերաններն առնում, ծամում, ծամծմում, փափկացնում ապա գործ են սկսում:

Միայն ծաղիկներից չէ՝ որ մեղունները մեղր են հաւաքում. կան տեսակ տեսակ բանջարեղէնների, ծառերի շատ փոքրիկ տերևներ, որոնք իրանցից քաղցրահամ հեղուկ են դուրս տալիս. մեղունները սրանց ծծում, հաւաքում և փեթակ են տանում: Զանազան ծառերի, ինչպէս օրինակ մեր սովորական ուռի, բարդիի և այլ ծառերի վրայ երբեմն ապրում են փոքրիկ ոջիւներ, որոնք իրանցից մեղրի նման քաղցր նիւթ են դուրս տալիս. սա ծառերի տերևների վրայ շատանալով՝ բարակ շերտ է կազմում, մանաւանդ առաւօտուայ ցօղն էլ իջնելով նրանց վրայ, մեղ-

րանման հեղուկ է դարձնում. շատ տեղ սրան մեղրացօղ են ասում, տղաներն էլ սիրով ուտումեն: Այս մեղրն էլ մեղունները հաւաքելով՝ տուն են տանում: Սրա նման է տեսակ տեսակ ծառերի մանաւանդ չամ ծառի (մայրի) վրայ բնակուող ոջիւների քաղցր հիւթը. սա մնալով ծառերի կեղևների վրայ՝ զանազան հիւանդութիւններ է առաջ բերում, որից ծառերը վնասուելով՝ չորանում կամ փթումեն: Մեղունները այս ծառերին էլ օգնու. թեան հասնելով՝ ազատումեն:

Նրանք իսկոյն այդ քաղցր հիւթը հաւաքում չորացնումեն ու դրանով ծառերի հիւանդութիւնների առաջն առնումեն: Շատ անգամ անտառապահները այս բանը փորձելով՝ տեսել և համոզուել են:

Ահա այսպէս են, սիրելի ընթերցող, մեղունները մոմ, իրանց ու մեզ համար օգտակար մեղր պատրաստում: Թէև ծաղկափոշին, ջուրը աշխատաւորների կերակրի մեծ մասն են կազմում, բայց առանց մեղրի խառնուրդի նրանք չեն կարող ապրել: Այս գլուխն վերջացնելուց առաջ աւելորդ չենք համարում ասել, թէ մեղունները շատ անգամ իրանց և մարդկանց համար թունաւոր բոյսերից հիւթեր ծծելով՝ բերումեն փեթակ, մեղր պատրաստում. իրանք ուտելով զանազան հիւանդութիւններով վարակւում, ոչնչանումեն. մարդիկ

ռւտելով՝ գլխացաւ են ստանում, կերածները վեր-
ածում, հիւանդանում և շատ անգամ էլ մեռ-
նում են:

Մի քանի տեղերում, որտեղ թունաւոր բույսեր
ու ծաղիկներ շատ կան, այդ տեղերի մեղուա-
պահները իրանց մեղուների մեղրից չեն օգտւում,
այլ միայն մոմից: Բազումի շրջակայքում, Տրա-
պիզոնի մօտերը ձորերի մէջ այդ բույսերից շատ
կան:

10. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽԵՂԻՆ ՈՒ ՅԻՇՈՂ ՈՐԹԻՆԻՆԸ.

Մեղուների յիշողութիւնն էլ բաւականին լաւ
է. պարզ լինելու համար բերենք մի քանի օրինակ-
ներ:

Ս.մեն մարդ էլ տեսած կամ լսած կըլինի, թէ
մեղուները իրանց բնակարանից տմբողջ ժամերով,
վերստերով հեռու են գնում, ծաղիկներից նիւ-
թեր հաւաքելով՝ տուն են վերադառնում. նրանք
այս անում են առանց գոռարութեան և յաջող
կերպով փեթակը գտնում: Մի գիտնական պատ-
մում է, թէ ինքը աշնան ժամանակ փեթակից
հեռու մի պատուհանում բաց ամանով մեղր է
դրել. մեղուները այս նկատելով՝ մի քանի ան-
գամ գնացել են այնտեղ և մեղրը կերել. ձմեռն
անցնելուց յետոյ գարնանը նրանք մի քանի ան-
գամ նոյն տեղն են գնացել, բայց բան չըգտնե-
լով յետ են դարձել. այս օրինակներից պարզ երեւում
է նրանց յիշողութեան սրութիւնը, որ ամիսներ
անցնելուց, վերստերով հեռանալուց յետոյ էլի
գալիս նոյն տեղը ճանաչում, գտնում են:

Դեռ այս բաւական չէ. շատ անգամ նկատուած և
հաստատուած է, թէ մեղուները ծաղիկաւէտ ծառի,
մարգագետնի, նոյն իսկ առանձին ծաղիկների տե-

ղերը որոշել և գտել են, միշտ նրանց մօտ են գնացել ու իրանց հարկաւոր նիւթերը գուրս բերել: Նոյնպէս լաւ լիշում և գնում են իրանց հաւաքուած՝ խորհուրդ կազմած տեղը, թէ ո՞ր ծառի, ո՞ր ժառի վրայ ժողովուրդ, մտածել, սպասել են՝ մինչև նոր բնակարան գտնելը և այլն:

Երբեմն եղանակը փոփոխուելիս, մանաւանդ սաստիկ քամի բարձրանալիս խեղճ մեղուները մոլորւում են. քամին քշում տանում է նրանց բոլորովին անծանօթ աշխարհ. ահա այս բանի առաջն առնելու համար, նրանցից շատերը զանազան խորամանկութիւններ են անում. օրինակ քամի բարձրանալիս՝ բոյսերին, ծառերի ճիւղերին, ծաղիկներին կաշում մնում են կամ թէ քարերի արանքում պահուում են: Աւելի ծիծաղելի և զարմանալի է, երբ նրանք ստբերով փոքրիկ սւազի կտորներ վերցնելով՝ նրանց են փաթաթւում. այսպէս ծանրանալով՝ աւազի հետ միասին գետնի վրայ են մնում մինչև քամու գաղարելը: Երբ մեղուները վայրենի դրութեան մէջ ծառերի, ժառերի կամ այլ սրանց նման տեղում փեթակներ են շինում, այն ժամանակ եղանակի տաքութիւնից կամ նոյն իսկ իրանց մեղուների բազմութիւնից ներսի օդը տաքանում, վատանում և ծանր է լինում. ահա այդ դէպքում մեղուները ստիպուած են մի կերպ դը-

րանից ազատուել: Նրանք սկսում են փեթակի մէջ թռչել. իրանց թևերի հետ շարժում են օդը, նրան գուրս են քշում և դրա փոխարէն դրսից նոր, մաքուր օդ ստանում, ազատ շնչում են. սրանով փեթակը հովանում և խցիկների մեղրամոմէ բարակ պատերը անվնաս են մնում:

Երբ գոսումը շատ շոգ է լինում, այն ժամանակ այդ տեսակ մաքրելու ձևը էլ այնչափ օգուտ չի տալ. նրանք իրար են անցնում, սաստիկ բաշկանում և սրտի բարկութիւնը կը թափեն այն մարդու կամ կենդանու վրայ, որը այդ ժամանակ իրանց բնակարանի մօտ է գտնւում: Այսպիսի դէպքում էլ մեղուները հնար են գտնում ու իրանց խցիկները հալչելուց ազատում. նրանցից մեծ մասը գուրս գալով փեթակի կտուրը՝ այնտեղ թռչում կամ նստում են, որ գոնէ ստուեր անելով՝ արևի տաք ճառագայթներից կարողանան փեթակի կտուրը պաշտպանել. երբեմն այս փորձը յաջողում է: Պարզ բան է, երբ մեղուները մարդկանցից լարմար բնակարան ստանան, էլ կարիք չեն ունենալ այս տեսակ միջոցների դիմել. միայն բանը նրանումն է, որ նրանք հարկաւոր դէպքում տեսակ տեսակ հնարներ են մտածում, իրանց ունեցածը պաշտպանում ու պահում են: Այս մի բանի փաստերն էլ բաւական են ընթեր-

ցողներին համոզելու նրանց գիտակից, խելօք դոր-
ծողութիւնների մասին:

11. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԵՐԱԶՐԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ.

Դու, սիրելի ընթերցող, այստեղ էլ պիտի տես-
նես այս փոքրիկների խելքն ու խորամանկութիւ-
նը, որ մարդու միայն զարմացնել կարող են:
Սրանց մէջն էլ գողութիւնն ու աւազակութիւնը
տարածուած է, մանաւանդ վաչրենի դրութեամբ
ապրողների մէջ: Որպէսզի իրանց աշխատանքի
պտուղն իրանք կարողանան վայելել, նրանք փե-
թակների դուրսն էլ, ներսն էլ գիշեր ցերեկ պահա-
պաններ են դնում: Սրանց պարտականութիւնն է
փեթակի ամբողջութեան, իրանց պաշար մեղրի,
մանաւանդ թագուհու վրայ լաւ ուշք դարձնելը,
այնպէս որ օտար մեղուի թռլ չեն տալ ներս
մտնելու. իսկ եթէ այս իրանց ուժից բարձր լի-
նի, որոշ ձայներ հանելով՝ իմաց են տալիս ներսի
պահապաններին, որոնք առհասարակ դռան մօտ

են լինում. սրանք ձայն լսելու պէս օգնութեան
են հասնում, իսկ հարկաւոր գէպքում ուրիշնե-
րին էլ օգնութեան կանչում: Ներսիները այս
ժամանակ աղմուկով, խալթոցները պատրաստ
դուրս են թռչում թշնամուն ոչնչացնելու, իրանց
ընկերներին, սերնդին, ունեցածը պաշտպանելու:
Չնայելով այս զգուշութիւններին, նրանց մէջ էլի
գողութիւնը անպակաս է:

Երբեմն մեղուները չեն ցանկանում երկար ու
բարակ աշխատել, այլ ծով, անգործ մարդկանց
նման ուզում են ուրիշի պատրաստածից օգուտ
քաղել կամ բոլորովին թալանել: Այդ նպատակով
նրանք ահագին խմբերով յանկարծ յարձակում են
այս կամ այն փեթակի վրայ, պահապաններին
կոտորում, ներս մտնում, այստեղ եղածներին էլ
դուրս քշում կամ անխնայ ոչնչացնում են. ապա
պատրաստի մեղրի վրայ ընկնելով՝ ագահաբար ու-
տում և տանում են իրանց փեթակը. ահա այս
կերպ կարճ միջոցում ամբողջ փեթակը կողոպ-
տում թալանում են: Որովհետեւ այսպիսի յարձա-
կան ժամանակ շատ անգամ բոլորը տանը չեն
լինում, դրա համար աւազակները յաջողու-
թիւն են գտնում: Զարմանալին այն է, որ
սրանք ուրիշի փեթակը ներս մտնելիս, ամենից
առաջ աշխատում են թագուհու բնակարանը

գտնել ու նրան սպանել, հաստատ դիտնալով, որ այս չարագործութիւնը յաջողուելուց յետոյ մնացած մեղուներն առանց թագուհու չեն կարող ապրել, ուրեմն պիտի ցրուին կամ ոչնչանան. այդ դէպքում նրանց ամբողջ մեղրի պաշարը իրանց կըլինի և եթէ հակառակութիւն էլ պատահի՝ շատ չնչին: Այս աւագակ խմբերը կարճ ժամանակում շատ փեթակներ կարող են կործանել և ուրշների աշխատանքով ապրել:

Որպէսզի այս չարագործութեան առաջն առնեն, մեղուապահները շատ անգամ աշխատաւոր մեղուների թիւը շատացնում են, միւս կողմից երբ աւագակների խումբը փեթակի ներսն է մտած լինում, ծուխ տալով նրանց խեղդում են. իսկ ազատուածներն էլ ծխի հոտ ստանալով՝ չեն կարող իրանց բնակարանը վերադառնալ, որովհետեւ այդ անծանօթ հոտը իրանց ընկերները չկարողանալով տանել՝ թշնամու տեղ են գնում նրանց և սպանելով՝ հեռացնում են. այս կերպ աւագակների առաջը մասամբ առնում են: Շատ անգամ պատահում է մի կամ երկու մեղու էլ առանձնապէս գողութիւն են անում. իրանց նպատակին հասնելու համար նրանք խորամանկ միջոցների են դիմում, օրինակի համար. դաշտերում գնում խառնում են գտնազան մեղուների խմբերի մէջ,

նրանց հետ աշխատում, միւսնոյն մարգագետնից, միւսնոյն ծաղիկներից նիւթեր հաւաքում և ստանում են այն հոտը, ինչ որ այդ խմբի մեղուները ունին. այսպէս ապահով, անվտանգ մտնում են բոլորի մէջ և միւսների հետ վերադառնում են փեթակ:

Այս դէպքում մեղուներին չի յաջողում կամ շատ դժուար է լինում աւագակներին բռնել, այնպէս որ խորամանկները խմբի անդամ համարուելով՝ ազատ կերպով ներս ու դուրս են անում: Խորամանկ աւագակներն ամեն կողմից գննում, քննում են նոր բնակարանը, նրա դուրսը, ներսը, ծածկած տեղերը և եթէ մի փոքր լարմարութիւն գտնին, ծածուկ մտնում են մեղր պահած տեղը, ուտում, կշտանում և ապա դուրս են թռչում դէպի իրանց բները:

Իսկ եթէ յաջողուեց փեթակի դրսի մի ուրիշ ճեղքից ներս մտնել, այդ միշտ շարունակում են. ընկերների թիւը շատացնում ու խեղճ աշխատաւորների մեղրը իրանց փեթակն են քաշում. այս կերպ էլ աւագակային խումբը շատանում, մեծանում է:

Սրանց էլ առաջն առնելու համար մեր փոքրիկ խելօքները իրանց փորձերից ու զրկանքներից օգտուելով, ուրիշ միջոցի են դիմում, օրինակ. բացի սովորական պահապաններից, նրանք իրանց մի-

ջից ուժեղներին պահապան հսկողներ են ընտրուած, այնպէս որ սրանք կատարեալ իրաւունք ունին ամեն մի ներս ու դուրս անողին քննել և ցերեկով ոչոքի ներս չթողնել:

Ամեն գալող պարտաւոր է մեղրը բերանից դատարկել նրանց առաջ և յետ գնալ:

Սրանք էլ աշխատաւորների բերած մեղրն ու ծաղկափոշին հաւաքում են փեթակի մէջ, որոշ տեղերում:

Այս կերպով բաւականին պաշտպանում, իրանց ու ժառանգների կեանքը ապահովացնում են:

Պատահում է, աշնան վերջերին կամ գարնան սկզբներին ծաղիկները պակասելով, աւազակները, նոյն իսկ կանոնաւոր աշխատողները կերակրի հարկաւորութիւն են ունենում. այս ժամանակ որտեղ քաղցր բան են գտնում, անխնայ կերպով վրայ թափւում, ուտում ու տուն են բերում. այսպիսի դէպքում շաքարի գործարանատէրերը, շաքարահաց թխողները և առհասարակ քաղցրաւենիք ծախողները լաւ են վնասուում. երբեմն էլ մեղունները այս կամ այն ծակից մտնում են մառանները, քաղցրահիւթ հեղուկները ագահ կերպով ծծում, թմրում և տեղն ու տեղը մեռնում են, այնպէս որ մեղուապահներն էլ են վնասուում: Սրա առաջն առնելու համար նրանք փեթակնե-

րի մօտ ցորենի, գարու ալիւրից շինած խիւսի նման ջրալի նիւթ կամ ուրիշ քաղցրեղէն հեղուկներ են դնում, որոնք մեղուններին շաքարի տեղ կարող են ծառայել ու բաւականութիւն տալ մինչև գաշտ դուրս գալը:

12. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԶԳՈՏՈՐԸՆԵՐԸ.

Մեղունների մասին այսչափ բաներ լսելուց յետոյ, անպատճառ մեր ընթերցողները էլ չեն զարմանալ նրանց զգայարանների վրայ: Այն, մեղուն էլ մեզ նման տեսնել, հոտոտել, ճաշակել, լսել և շօշափել կարող է. նա էլ այդ հինգ զգայարանից կանոնաւոր օգտւում է, ինչպէս շատ կենդանիներ:

Զանազան գիտնականներ բազմաթիւ փորձերով հաստատել են այդ ամենը, մենք էլ դրանցից մի քանիսի փորձերից օգտուելով՝ ձեզ ենք յայտնում:

Մեղուների հարստութիւնը շատ սուր է անթիւ փորձերով այդ հաստատել են, օրինակ, հէնց երբ մէկը նրանց փեթակի դռնակի մօտ մի կաթիլ վարդի ջուր կամ հոտաւէտ իւղ դնէ, մէկ էլ տեսնես, նրանք խմբով դուրս են գալիս, փեթակի չորս կողմը թռչում, որպէսզի գրաւիչ հոտով առարկան կամ ծաղիկը գտնեն. երբ այս չի յաջողում նրանց, նորից յետ են դառնում փեթակ: Շատ անգամ մեղուները հոտով են իրանց ընկերին և օտարին ճանաչում. նոյն իսկ իրար մօտ գտնուած շատ փեթակների մեղուները միմեանց չեն խառնուում, ամենքն էլ իր փեթակն է ներս ու դուրս անում. իսկ եթէ պատահի մի ջահիլ մեղու սխալմամբ ուրիշի փեթակ մտնի, այն ժամանակ ներսինները հոտից իմանում են օտար լինելը, նրան դուրս են քշում կամ սպանում:

Ահա այս պատճառով մեղուապահները երբ մի փեթակի մեղուներից մի ուրիշի հետ միացնել են ուզում, առաջ երկու փեթակների մէջ ծռելի կամ որևէ անուշ հոտ են տարածում, որանով նրանց հոտառութիւնը բաւականին բթացնում են, ապա իրար հետ խառնում. հակառակ դէպքում նրանք իրար կըհարածէին կամ ջարդ ու փշուր անելով՝ թէ իրանց և թէ տէրերին կըվնասէին:

Սրա հակառակ նրանց յարստութիւնը այնչափ էլ լաւ

զարգացած չէ, թէև իրանց ընկերների ուրախութեան, տխրութեան, օգնութեան կանչելու ձայները շատ լաւ հասկանում, պաշտպանութեան գրնում, տրտմում կամ ուրախանում են: Ուրիշ ձայներով նրանք շատ չեն հետաքրքրւում և հանգիստ իրանց գործն են շարունակում:

Նրանց արհեստները կանոնաւոր է, մանաւանդ գոյները շատ լաւ ջոկում, որոշում են միմեանցից: Մի անգլիացի գիտնական իր փորձերից դուրս է բերել, որ նրանք ամենից շուտ ճանաչում և սիրում են հարցա գոյնը, սրանից յետոյ «պիսիլ», ապա հասկը, հարսնագոյնը, բէլիւնը, և վերջապէս հարկը: Այդ գիտնականի շատ փորձերից յիշենք գոնէ մէկը: Ամենից առաջ նա վեր առաւ կապոյտ և կարմիր թղթեր, երկուսի վրայ էլ հաւասար չափով մեղր քսեց. նա բաց թողեց մի մեղու, որը եկաւ, կապոյտի վրայ կանգնեց, մեղրը կերաւ և առանց այս ու այն կողմ նայելու հեռացաւ փեթակ. մի փոքր ժամանակից յետոյ նորից վերադարձաւ և ուղիղ գնաց կապոյտի մօտ, կերաւ և հեռացաւ:

Երրորդ անգամին նա կարմիր թուղթը բերեց կապոյտի տեղ, իսկ կապոյտն էլ՝ կարմրի տեղ. այս անգամն էլ մեղուն կապոյտի մօտ գնաց, անուշ արաւ և հեռացաւ: Այս փորձը օրչափ կրկնեց,

միշտ միևնույն բանը տեսաւ:

Յետոյ նա բացի այդ երկու գոյներից, աւելացրեց երկու ուրիշ գոյնի թղթեր. այս անգամ. նա բաց թողեց երկու ուրիշ մեղուներ. սրբանք էլ ամեն անգամ կապոյտի մօտ էին գնում, թէև փորձ անողը մի քանի անգամ կապոյտ թըղթի տեղը փոխեց, էլի միևնույն բանը կրկնուեց:

Վերջապէս նա ուրիշ երկու գոյնի թղթեր էլ աւելացրեց. այսպէս վեց գոյնի թղթեր՝ հաւասար չափով մեղր վերանները՝ կախուած էին. այս անգամ նա ուրիշ մի քանի մեղուներ բաց թողեց, էլի նոյն հետեանքն ստացաւ:

Վերջին փորձի ժամանակ նա կապոյտ թուղթը պահեց. այժմ մեղուները բոլոր թղթերի մեղրի մօտ գնացին, կերան, բայց ամենից շատ սպիտակ թղթի մօտ գնացին, քան միւսների. նա սպիտակը պահեց, այն ժամանակ նոր բաց թողած մեղուների փորձից երևաց, որ հիմա աւելի շատ անգամ գնացին կանաչ թղթի մօտ, քան միւսների. իսկ երբ մի երկու օր յետոյ բոլոր գոյները ուրիշ տեղ, ուրիշ դիրքով դրեց՝ հին փորձը կրկին հաստատուեց, այսինքն կապոյտ թղթին ամենից շատ մօտեցան, դրանից յետոյ շատ գնացին սպիտակ, ապա կանաչ և միւս գոյների մօտ:

Մեղուների և առհասարակ միջատների շօշափումը կատարւում է նրանց շօշափուկների կամ բեխերի միջոցով, միայն բանը նրանումն է, ընթերցող, որ նրանք դրանցով իրար հետ խօսում են, իրար բան են հասկացնում. հէնց օրինակ, մի բան ուրիշին յայտնելիս, մօտենում է մէկը միւսին, շօշափուկները քսում է ընկերի մարմնի այս կամ մասին և գործը արդէն պարզուած է լինում, ընկերը նրան հասկանում է: Երբ ընդհանուրին վերաբերեալ գործ է, այն ժամանակ մէկ մէկու նոյն կերպ հասկացնում են, այնպէս որ կարճ միջոցում ամենքն էլ նորութիւնն իմանում, պատրաստուում են. օրինակ, թշնամի գալիս, թշնամու գէմ կըռուելիս կամ աշխատանքի գնալիս՝ այսպէս են իրար իմաց տալիս: Շօշափուկների գործածելը աւելի գիշեր ժամանակ է լինում: Մեղուների ճաշակելիքն էլ շատ լաւ զարգացած է, աւելի լաւ, քան թէ մսակեր միջատներինը և կործում են, թէ այդ գործարանը բերանում կամ լեզուի վրայ է լինելու:

13. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆՆԵՐԸ.

Կեանքը կռիւ է, հաստատում են շատ գիտնականներ. առանց կռուի ոչ մի կենդանի արարած չի կարող իրան, իր որդիներին և սերունդին պաշտպանել. բնութեան այս օրէնքը ամենքի համար է: Եթէ այդպէս է, ուրեմն մեղուններն էլ դրանից ազատ չեն, պիտի հարցնես դու, ընթերցող. այո՛, նրանք էլ այդ կռուի մէջն են, նրանք էլ շատ թշնամիներ ունին. չնայելով խեղճերը հազար ու մի տեսակ դառը չարչարանք ուտում, ուրիշներին չեն վնասում, բաց էլի թշնամիներով են շրջապատուած: Հէնց օրինակ, վեր առնենք մուկը: Այս անպիտանները ձմեռուալ կամ գարնան սկզբին, երբ դեռ մեղունները թմրած դրութեան մէջ են, այդ ժամանակ կռծելով ծակում են փեթակը կամ ուրիշ ծակ ու ճեղից ներս մտնում, խեղճերին անհանգիստ անում, ոչնչացնում և մեղրի պաշարը ձեռքերից խլելով՝ ուտում են: Շատ անգամ էլ նրանք փեթակի մէջ մնալով, իրանց համար բուռն են շինում, ձագեր հանում, կարծես, թէ իրանց քրտինքով են ձեռք բերել: Երբ մեղունները մի փոքր արթնանում, բազմանում են, կամ թէ երբ դեռ նրանք ու-

ժից ընկած չեն, կատաղի կերպով կռոււմ են թշնամու դէմ ու իրանց խալթոցներով սատակեցնում են նրանց. որովհետեւ սրանց չեն կարող փեթակից դուրս ձգել, այդ պատճառով նրանց չորս կողմը մեղրամոմով պատում, մաքրում են. սրանով՝ մէկ անմաքրութիւնից, մէկ էլ նեխուած վատ հոտից են ազատում:

Պետքէ ասել, մեղունները կեղտոտ բան չեն սիրում, նոյն իսկ անխնայ կերպով լարձակումեն իրանց տիրոջ վրայ, եթէ նա կեղտոտ ձեռքերով, անմաքուր, գանազան անդուրեկան հոտ տարածող շորերով իրանց է մօտենում, մեղր տանել կամ թագուհի փոխել է ուզում: Չարաչար կծում, խալթում են այն մարդուն, որը քրտնած նրանց է մօտենում. քրտնքի դառն հոտն էլ նրանց դուր չի գալ: Ով նրանց փեթակի մօտ բարձր խօսի, բղաւէ, արագ շարժողութիւններ անէ, սրան էլ մեղունները պատժում են. մի խօսքով նրանք սիրում են մաքուր, խաղաղ, հանգիստ կեանք. այդ պատճառով էլ մեղուապահները ստիպուած են մաքուր ձեռքերով ու հագուստով, առանց աղմուկի ու գղրգղոցի մօտենալ նրանց:

Անպիտան սարգերն էլ մեղուններին պակաս թշնամի չեն. նրանք իրանց ցանցերով առատ որս են անում, խեղճերի հիւթը ծծում, ոչնչացնում

են. դրա համար մեղուապահները փեթակի չորս կողմն ու մօտիկներում գտնուած սարգի ոստայնները կամ ցանցերը փչացնում են: Գորտն անգամ վնասում է մեղուին. երբ խեղճը ծաղիկների վրայ հանգիստ աշխատում է, ահա գորտն էլ սուսիկ փուսիկ, թագուն նայում է նրան և մի թռիչքով վրայ յարձակում, բռնում ուտում է:

Իսկ ապա ծիծեռնակները, արգիլները, սարեակներն և ուրիշ շատ թռչուններ... նրանք թռչող կամ ծաղիկների վրայ նստած մեղուների կեանքը կարճացնելով՝ իրանց կերակուր են դարձնում: Փոքրիկ մրջիւններն անգամ մեղուներին թշնամի և վնասակար են. մէկ էլ տեսար, փեթակի ամենափոքր ծակերից ներս սողալով՝ ագահ կերպով պատրաստի մեղրը իրանց բնակարանն են տանում. արգէն բաւական է, երբ միքանիսը այդպիսի առատ որսի տեղ իմացան, էլ քուն ու դադար հօ չեն ունենալ. անդադար խումբ խումբ իրար լետելից քարվանի նման շարուելով՝ մեղուների եղած չեղածը քաշում տանում են իրանց բունը: Մրջիւնների հասցրած այս մեծ վնասից ազատուելու համար, մեղուապահները ամեն կերպ աշխատում են նրանց բնակարանները ոչնչացնել: Վերջապէս մարդը մեղուների վտանգաւոր և ամենամեծ թշնամին է, որովհետեւ շատ անգամ անտառ-

ներում, սարերում ու ձորերում վայրենի դուրթեան մէջ փեթակներ տեսնելով, էլ չեն բաւականանում մի որոշ չափով մեղր տանելով, այլ առանց մրաածելու, անգթաբար փեթակը ծուխ տալով՝ ամենքին դուրս են քշում և բոլորը տանում են. ինչ անեն խեղճ մեղուներն առանց թագուհու, առանց ձմեռուայ պաշարի, այս դէպքում ամբողջ փեթակն ոչնչանում է: Իսկ որչափ ապերախտութիւն է նոյն իսկ այն մեղուապահների կողմից, երբ նրանք խեղճերի համար ձմեռուայ պաշար այնչափ քիչ են թողնում, որ նրանք քաղցածութիւնից ամբողջապէս մեռնում, փչանում են. ահա ագահի պատիժը. իսկ ինչ մեղաւոր էին մեղուներն իրանք....:



14. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՕԳՈՒՑԸ.

Ինչպէս ընթերցողը տեսաւ, մեղուններն են մեղր ու մոմ տալիս, իսկ սրանք մեզ համար օգտակար են և լաւ գին ունին: Ո՞վ չգիտէ մեղրի քաղցր համը, ո՞վ չգիտէ, որ սրանով շատ կերակուրներ են շինուում, տեսակ տեսակ խմորեղէններ պատրաստուում, կերակուրներ քաղցրացնուում և այլն: Մեղրից պատրաստուում են նոյնպէս մեղրաջուր, լիմօնադ, գինի, օղի, կօնեակ, բայց ամենից նշանաւոր է մեղրից պատրաստած քացախը. սա շատ լաւ, մաքուր, խիստ է և իր մէջ գտնուած նիւթերը շատ լաւ է պահում. բացի դրանից մեղրը լաւ սննդարար կերակուր է. նա օգնում է նոյնպէս մի քանի տեսակ թեթեւ հիւանդութիւնների: Մեղրամոմն էլ վառելու և այլ բաների համար լաւ գին ունի:

Երբեմն մարդիկ շատ մեղրամոմ են ուզում ստանալ, այդ պատճառով նրանք մեղունների թիւը շատացնում, նոր փեթակներ են շինում, բազմացնում են, որովհետեւ որչափ շատ փեթակ լինի, այնչափ էլ շատ մեղրահացեր կըլինին. իսկ մենք տեսանք, որ մեղրահացերն էլ մոռից են շինուում:

Սրա հակառակ, ով ցանկանում է շատ մեղր

ստանալ, նա հին մեղրահացերն էլ չի փչացնում. այլ նրանց միջից մեղրը քամելուց յետոյ միւնոյնը պահում է միւս տարիների համար. քանի որ մարդիկ փորձով տեսել, համոզուել են, որ մեղունները մինչև մէկ ֆունտ մոմ են պատրաստում, ահա այդչափ ժամանակում նրանք 10 ֆունտ մեղր կարող են շինել: Այս բոլորը նիւթական օգուտներ են. բացի դրանից մենք տեղ-տեղ տեսանք, որ նրանք իրանց տէրերին ուրիշ բաներ էլ են սովորեցնում:

Մեղուններն էին, որ տէրերից կամ առհասարակ իրանց մօտ եկողներից մաքրութիւն էին պահանջում. նրանք էին, որ ոչ մի վատ, զգուելի հոտ չկարողանալով տանել, նոյնն էլ իրանց շրջապատողներից էին սպասում. նրանք էին իրանց անդադար, եռանդուն աշխատանքով մեզ օրինակ լինում: Նրանց հաւատարմութիւնը դէպի իրանց ընկերները, փեթակը, թագուհին և առհասարակ ամբողջ սերունդը խրատական է. մանաւանդ երբ միշտ աշխատում են միմիայն առողջ, ուժեղ ժառանգներ ունենալ: Վերջապէս նրանք էին անկատելի կերպով մեր բոյսերին ու ծառերին օգուտներ տուողը: Փոքրիկ, օգտակար, ժրաջան և օրինակելի մեղունների մասին խօսելուց յետոյ՝ առաջարկում ենք մեր սիրելի ընթերցողներին սի-

րել այդ անմեղ արարածներին, պաշտպանել նրանց
և օգտուել նրանց տուած բարիքներից: Չէ որ նրանք
մեզանից մի առանձին մեծ ծախս, խնամատարու-
թիւն և ժամանակ չեն պահանջում. ինչպէս տե-
սանք, նրանք միայն նիւթական, բարոյական օգուտ
տուող, զուարճութիւն, ուրախութիւն պատճառող
են. ուստի վերջացնում ենք մեղունների մասին խօսե-
լը շատ նշանաւոր մեղուապահ քահանայ Զերջոնի
հետեւել խօսքերով. «Ով իսկապէս մեղունների բա-
րեկամ է, ով մեղուապահ է, նա անպատճառ աշ-
խատող, կարգապահ, համբերող, տնարար, զգաց-
մունքով լիքը և առհասարակ բարի մարդ է լինելու:
Ով մեղունների հետ գործ ունի, ով նրանց
խնամում է, նրա մէջ մի տեսակ զգացում է զարթ-
նում դէպի բնութեան ամենակարողութիւնն ու
զարմանալի բաները. իսկ բնութեան հաւանողը
չար մարդ չի կարող լինել»:

Պատ. 2



Աշխատաւոր

Պատ. 1




Արու

Պատ. 3



Թագուհի

Պատ. 4



ա, ա, Չուարաններ. բ, բ, Չուեր. գ, Սերմնարան.

9998

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0082410

Մասնաւորի պատէ է և շտապով լոյս էլ պէտքի

1.) Մագնիսականութիւն.

2.) Ուժեր և էլէքտրականութիւն:

Տպագրութեան համար Բոլորովին պատրաստ էն
Քիմիա, Բաղանիք և լողանալ, Սննդառութիւն,
Կերակրի շրջանառութիւն և այլն և այլն:

Գինն է 10 ԿՈՊԵԿ